ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ)

ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան № 1 1941 թ.

Վ. ՀԱՄԱՋԱՍՊՅԱՆ

ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆԻ ԳՐԱՎՄԱՆ ՏԱՐԵԹՎԻ ՃՇՏՈՒՄԸ

Հայ բանասիրության մեջ, մեր պատմիչների հաղորդած տեղեկությունները սխալ հասկանալու հետևանքով, Անին Մոնղոլների կողմից գրավելու ժամանակը ճիշտ չի թվագրված։

Անիի գրավման տարեթվի այդ սխալը գալիս է Զամչյանից, որը ժամանակագրական ժառանգում է ունեցել մեր մի շարք պատմագիրների կողմից տված տեղեկություններին և Անի քաղաքի գրավման տարեթիվը նշանակել է 1239-ը։

Զամչյանը գրում է. «Իսկ մեծ իշխանն Զարմագան առեալ ընդ իւր զիշխանսն հայոց զԱւագ և Վահրամ՝ խաղա բաղմութեամբ զորաց ի վերայ քաղաքի Անւոյ, և մինչև հասեալ էր անդր առաքեաց դեսպանսն առ վերակացուս քաղաքին գալ ի հնազանդութիւն իւր, եւ տալ զքաղաքն։

Նոքա եռուն պատասխանի և ասեն. այս քաղաք շանն-շահին է, որդւոյ Զաքարեայ, առանց նորա հրամանի ոչ կարեմք առլուն տալ դսա, և ոչ ևս մտանել ընդ իշխանութեամբ օտարի։ Եւ ի դառնալ անդրէն դեսպանսն ոամիկք քաղաքին հարձակեալ ի վերա նոցա առ ճանապարհս սպանին զնոսա։ Զայն իբրև լուաւ և եկեալ պաշարեաց զքաղաքն. և պատերազմե ընդ նմա սաստկութեամբ յոյժ. և մտեալ ի քաղաքն, կոտորեցին զամենայն ինչս և զզարդս տանց և կրպակաց. և մերկացուցին զամենայն զեկեղեցիս և եղծեալ ապականեցին զքաղաքն» (Զամչեան, Պատմութիւն հայոց 2-րդ մաս, էջ 213)։

Զամչյանը իր «Պատմութիւն հայոց» աշխատության Մոնղոլների արշավանքների մասը կազմելիս, ինչպես ինքն է նշում օգտագործել է Կ. Գանձակեցու, Վարդան մեծի, Մաղաքիա Աբեղայի, Ս. Օրբելյանի և Ս. Անեցու աշխատությունները։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Զամչյանը բոլորովին էլ ճիշտ չի պարզել պատմագիրների հաղորդած տեղեկությունները։ Հիշատակված աղբյուրներից և ոչ մեկում կոնկրետ չի նշված Մոնղոլների կողմից 1239 թվի Անիի գրավման մասին։ Վերոհիշյալ պատմիչները իրենց աշխատություններում նկարագրելով Գանձակի, Լոռու, Կայեանի, Անու և ամբողջ Հայաստանի նվաճումը մոնղոլական առանձին զորավարների կողմից, բոլոր դեպքերում հիշատակում են, որ այդ վայրերի գրավումները կատարվել է ընդհանրապես 1236 թվին, իսկ Զամչյանը, հետագայում նրան հետևելով նաև ուրիշները, բավական երկար էքսկուրսիաներ կատարելուց հետո, Անի քաղաքի գրավման թիվը առանձնացնում են այդ վայրերի գրավման տարեթվից, հասցնում այն մինչև 1239 թիվը։ Հայկական սկզբնաղբյուրներն ուշադրությամբ դիտողը կընկատի, որ Զամչյանը ոչ մի հիմք չի ունեցել 1239 թիվը նշանակելիս. բոլոր աղբյուրներն էլ խոսում են այդ տարեթվից առաջ կատարված գրավումների մասին։ Այսպես օրինակ Վարդան Պատմիչի վկայությամբ Մոնղոլական զորավարներից Զաղատան առանում

է Լոռի քաղաքն ու իր շրջակայքն, իսկ Զարմաղանն Անին ու Դարսի շրջանը։ Վարդանի տեղեկության համաձայն Զարմաղանի և Զաղատայի կողմից Գանձակի, ինչպես հետագայում և Վրաստանի, Լոռու, Կայեանի և Անիի գրավման տարին հիշատակվում է 1235 (684+551), որից հետո նույն զորավարների զորաբանակները շարժվում են դեպի Հայաստանի տերիտորիան, այսինքն և Անի։

«Յաւելեալ յինքն անհուն բազմութիւնքն՝ առաջնորդ ունենալով զԶարմաղանն կոչեցեալ զորապետ, զոյ ի Գանձակ շահաստան ի 684 թուին պաշարէ զնա աւուրս մինչեվ առնու և կոտորէ անողորմաբար բացի մատաղ տղայոց և ի կանանց, յորս յամենին։ Ապա շարունակում է «Եւ յայսմանէ յոժ առեալ մտանեն ի թագաւորութիւն վրաց և բաժանեն զան ու Անի տեղիս գաւառքն և զբերդս, Ամուրս մեծամեծ իշխանքն, զորս նուինս կոչէին. որք երթեալք յիւրաքանչիւր զդղեակս գաւառացն, զոր վիճակեալ էին և վաղվաղակի մատնեալ լինէին ի ձեռս նոցա ի պատուհաս մեղաց մերոց անչափից։ Զաղատան Նոինն է առ զլոռէ քաղաք եւ որք՝ յայն ի կողմանէ գաւառք. Դուղուղայ նուինն զԿայեան ամրագույն բերդ, ուստի Անին զԱւագ տէրն երկրին. և մեծն Զարմաղանն զԱնի և զԿարս և զմերձաւորս իւրեանցս» (Վարդան «Պատմութիւն Տիեզերական» էջ 185—190)։

Վարդան մեծի պատմածից շատ պարզ երևում է Մոնղոլական հրոսակախմբերի շարժման ուղղությունը Գանձակից մինչև Անի, Գանձակ, ապա (Վրաստան), որից հետո Զաղատան մնում է Լոռի Դուղուտա, նուինն Կաեն, իսկ Զարմաղանն Անի ու Կարս։ Ճիշտ է Վարդանը կոնկրետ չի նշում Անիի գրավման տարին, նա միայն ասում է որ գրաւեց «Եւ մեծն Զարմաղանն զԱնի և Կարս և զմերձաւորս իւրեանցս» բայց այս հիշատակությունից առաջ նա նշում է Զարմաղանի 684 թ. Գանձակ գալու մասին և առանց որևէ թվականի նշելով Մոնղոլական զորավարներին հասցնում մինչև Անի։ Եթե Անիի գրավման տարին եղած լիներ Գանձակի գրավումից 4 տարի հետո, ինչպես այդ ենթադրել է Չամչյանը, ապա չէր կարող Վարդանի նման պատմիչը անտարբերությամբ անցնել տարեթվային այդքան մեծ տարբերության փաստի կողքով, որովհետև նա Անիի գրավումից հետո կատարված դեպքերը տալիս է ամենայն ժամանակամանությամբ թվերով։ Այսպես օրինակ՝ «Արդ վեց հարիւր իննսուն և մի թուին Հայոց Բաչու Նուինն փոխեաց զիշխանութիւնն Զարմաղանից և էառ զԿարնոյ—քաղաք» (Վարդ. էջ 193)։ Բերածից, երևում է, որ Վարդանը, մի քանի տարիների տարբերության դեպքում, անուշադիր չէր լինի և անպայման կառանձնացներ Անիի դեպքը։ Նա իր ժամանակագրական կարգը, շարադրել է այն սխեմով, ինչ սխեմով, որ իրեն սովորեցրել և իր պատմությունն է շարադրել նրա մեծ ուսուցիչ Վանական վարդապետը։

Այսպիսով, եթե հավատանք Վարդան մեծի հաղորդած ժամանակագրական կարգին, իսկ չհավատալու ոչ մի հիմք չունենք, ապա կարող ենք համարձակորեն ասել որ Անիի գրավումը պետք է, որ կատարված լինի 1239 թվից առաջ։ Վարդանն այդ թիվը ուղղակի չէր կարող նշել, որովհետև Անի քաղաքի գրավումը եղել է Գանձակի գրավումից մեկ տարի հետո, նույն Անդրկովկասի մյուս վայրերի (Լոռի, Կայեն) գրավման հետ։ Անիի 1239 թվից առաջ 1236 թվի գրավման օգտին է խոսում նաև Ստեփաննոս Օրբելյանը։ Նա իր «Պատմութիւն Նահանգին Սիսական» աշխատության մեջ—«Վասն մեծի նախարարութեանն Օրբելեանց եթէ ուստի էին...» գլխում—ժամանակագրելով Մոնղոլների արշավանքները՝ դեպի Ռուսաստան, Բուլգարիա, Հնդկաստան, Պարսկաստան և այլ երկրներ՝ տալիս է դեպքերի ամբողջական մի թվական, որը և մենք կարող ենք համարձակորեն Անիի գրավման տարեթիվը համարել—

«Առին և զԱտրպատական, զԱռան և զՀայաստան, զՎիրս և զՀոռոմս. մինչ ի յԱնկիւրիա և ի Գագրա և ի Զմիւռնիա եփեսացւոց, և զԿիլիկիա և ի Գագրա և ի Զմիւռնիա եփեսացւոց, և զԿիլիկիա մինչև ի ծովն Ովկիանու (Միջերկրական) և ի ծովն Պոնտուի ի Տրապիզոն քաղաք... և առին զաշխարհս ի 685 (685+551) թուականին»։

(Ստեփանոս Օրբելյան» Պատմութիւն նահանգին Սիսական էջ 402)։

«Զառան և գնայ և առին զաշխարհս» ի 685 թվականին—. տողերը միանգամայն պարզ ցույց են տալիս, որ Հայաստանի՝ Հայոց ամբողջ աշխարհի, գրավումը Մոնղոլների կողմից կատարվել է 685 թվականին, այսինքն 1236 թվին։ Կասկածից դուրս է, որ Հայաստանի տերիտորիայից դուրս չէր կարող մնալ այնպիսի մի նշանավոր քաղաք, ինչպիսին որ հայոց նշանաւոր մայրաքաղաք Անին էր։

Ի միջի այլոց գրեթե նույնն ասված է նաև Սամվել Անեցու տպագիր տեքստում։ Սակայն այդ տեղեկությունը Սամվել Անեցունը չէ, այլ նրա շարունակողինը։ Այդ երևում է մեր Մատենադարանում գտնված Անեցու ժամանակագրության 1176 թվին ընդօրինակած մի գրչագրից, ուր Անեցու տեքստը հասցված է մինչև ՈՀԲ թվականը (տես № 5613 գրչագիրը)։

Վարդան մեծի հաղորդած տեղեկություններից պարզվում է, որ Անիի գրավումը մինչև 1239 թիվը չի հասնում, իսկ Ստեփաննոս Օրբելյանի հաղորդած տեղեկություններից երևում է, որ ինչպես ամբողջ Հայաստանը, ներառյալ նաև Անին, գրավված էր արդեն 1236թվին։

Դեպքերին ժամանակակից Կիրակոս Գանձակեցին իր «Պատմություն Հայոց» աշխատության մեջ նկարագրելով թաթարական արշավանքները, որպես դեպքերի ականատես ամենայն մանրամասնությամբ կանգ առնելով նրանց կողմից կատարած ավերածությունների, անգթությունների, և այլ վայրագությունների վրա, պատմում է գառնացած այն մասին, թե ինչպես Մոնղոլական հրոսակախմբերը հողին հավասարեցրին հայկական գեղեցիկ քաղաքները, հոյակապ պալատներն ու ամրոցները, անառիկ բերդերը՝ քարուքանդ անելով խաղաղ գյուղերը «ոչ ոքի չխնայեցին, անգթաբար ժողթեցին այրեցին ու ավերեցին», արտասուքը աչքերին ողբում է իր ժողովրդի ցավերն ու տառապանքները ցավից ու ահից կծկված պատմիչը։

Նա որպես ականատես մանրամասն արձանագրում է իր տեսածներն ու լսածները, սակայն Գանձակեցու աշխատությունն ունի մի թերություն միայն, որ նա չի տալիս դեպքերի կոնկրետ թվականները։

Մոնղոլական արշավանքներն Անդրկովկասում կոնկրետ պատկերացնելու համար մենք անհրաժեշտ ենք համարում Կիրակոս Գանձակեցու պատմածը բերել որոշ կրճատումներով միայն։

«Զորավարն գնդին հեթանոսաց, որում անունն էր Զաղատայ, լուաւ վասն ամրութեան քաղաքին Լօռէոյ և յոլովութեան գանձուցն, որ ի նմա էր Տուն իշխանին Շահնշահի և գանձք նորա, առեալ ընդ իւր զընտիր սպառազէնս յոլով մեքենայիւք և ամենայն պատրաստությամբ չոգալ անդ. և նստեալ շուրջ զնովաւ պաշարեաց զնա... Եկեալ թշնամեացն, փորեցին ներքոյ պարսպին և փլեցին զնա, և ինքեանք շուրջ նստեալ պահէին, զի մի ոք փոխիցէ։ Իսկ ընակիչք քաղաքին իբրև տեսին թէ առալ քաղաքն, սկսան մղել ի վախից, և ի ձոր անդր ընուին, և զայն տեսեալ թշնամեացն սկսան և նոցա մտանել ի քաղաքն, և՝ կոտորել յանխնայ դաս և զկանայս և զմանկունս... Իսկ իշխանն մեծ որդին Իւանէի, զոր Ավաղն կոչէին, իբրև նոցա զամենայն բազմութիւն թշնամեացն, որք լցին զաշխարհս ամենայն, ամրացաւ և նա ի բերդ ամուր, որ կոչի Կայլան... Առեալ զօրս բազումս եկն պաշարեաց շուրջ զբերդաւն... և առեալ զնա և զամենայն զօրն՝ չոգալ ի վերայ քաղաքին Անւոյ։

Քաղաքս այս Անի լցեալ էր բազմությամբ մարդկան և անասնոց, և պարապեալ ամրագոյն պարսպօք. և եկեղեցի բազում կայր, ի նմա, մինչ ի կարգ խօսից երդման այսպէս երդնուին. Անւոյ հաղար և մի եկեղեցին . և յոյժ փարթամ էր քաղաքն ամենայն իրօք։ Վասն որոյ յղփութիւնն՝ յամբարտաւանութիւն ի կորուստ, որպես սովոր է առնել յիսկզբանց և այսր։

Առաքեաց Զարմաղանն դեսպանս առ նոսա գալ նմա ի հնազանդութիւն, և որք գլխաւորքն էին՝ ի քաղաքին ոչ իշխեցին պատասխանի առնել պաղդամին առանց հարցնելոյ զիշխանն Շահնշայ. քանզի ընդ իշխանութեամբ նորա էր քաղաքն։

Իսկ ամբոխ քաղաքին և ռամիկքն սպա-

նին զպատգամաւորսն. և զայն տեսեալ զօրքն այլազգեաց, ի բարկութիւն դրդեցան. և պաշարեալ զքաղաքն յամենայն կողմանց, կանգնեցին փիլիկուանս բաղում արուեստագիտութեամբ, և մարտուցեալ ընդ քաղաքին զորեղապէ՛ս առին զնա։

Այլ և ոմանք յիշխանաց քաղաքին ձեռնատու եղան առ Թշնամին, զապրուստ անձանց շահելով. և նոցա կոչեալ արտաքս ի քաղաքէն բազմութիւն, խոստացան ոչինչ ունել նոցա չար. և իբրև ելին արտաքս առ նոցա ամենայն բազմութիւնն, բաժանեցին զնոսա յինքեանս, և սուր ի վերայ եղեալ կոտորեցին առհասարակ անողորմաբար, սակաւ կանայս և մանկունս թողեալ, և արս արուեստաւորս, զոր վարեցին ի գերութիւն։ Եւ ապա մտեալ ի քաղաքն առին զինչսն և զտարացուածս նոցա և կողոպտեցին զամենայն եկեղեցիս, և աւերեալ քանդեցին զամենայն քաղաքն, եղծին և ապականեցին զփառս վայելչութեան նորա» (էջ 239-246)։

Լոռի-Կայեն-Անի—ահա այն ուղղութիւնը, որը նշված է Գանձակեցու կողմից ճիշտ այն ձևով, որպիսին ունեն բոլոր նախորդ և հետագա շրջանի պատմիչները։ Անիի գրավման դեպքը չի առանձնացված մյուս վայրերի գրավման դեպքերից։

Այսպիսով պատմիչների հաղորդած տեղեկություններից պարզ երևում է, որ Անին Հայաստանի մյուս շրջանների հետ միասին գրավված էր 1236 թվին»։

Ներկայումս մեր ձեռքի տակ ունենք ՀՍՍՌ Պետական Մատենադարանի նոր հայտնաբերված ձեռագիր ժամանակագրություն Անանուն հեղինակի, որը պարզ հայտնում է որ Անին Մոնղոլների կողմից գրավվել է 1236 թվին։ Այդ գրչագիրը գտնվում է 8100 համարի տակ։ Բովանդակությամբ ընդօրինակված է 1784 թվին Միքայել և Կարապետ գրիչների կողմից։ Ունի հիշատակարաններ 149բ, 153 բ, 198 և 194 բ, 137ա և 157բ էջերում—չափն է 21. 15, կաշեկազմ, և ձեռք է բերվել Մատենադարանի կողմից 1939-40 թվին։ Ժամանակագիրը կարևոր տեղեկություններ է տալիս Հայաստանում կատարված մի շարք կառուցումների մասին (Հռիփսիմեի կառուցումը Կոմիտասի կողմից, Անիի կաթուղիկեի կառուցումը և այլն), տարբեր ժամանակներում եղած արշավանքների (Արաբներ, Սելջուկներ և Մոնղոլներ) մասին, արժեքավոր տեղեկություններ Դեմետրիի Գորգու և Թամարայի թագավորության շրջանի վերաբերյալ և այլն։

Այնպիսի հավանականությամբ, այս Անանուն ժամանակագրությունը մի փոքրիկ հատված է մեզ հասած անհայտ մի հեղինակի ամբողջական աշխատության։ Թեև ժամանակագրության զգալի մասը, ինչպես պարզվում է համեմատությունից արտագրություն է Կիրակոս Գանձակեցու և Ս. Անեցու աշխատությունների առանձին գլուխների, այնուամենայնիվ նա իր մեջ պարունակում է Մոնղոլական շրջանի վերաբերյալ բավական ինքնուրույն արժեքավոր նյութեր, որը մեզ հնարավորություն է տալիս պարզելու այդ շրջանին վերաբերվող մի շարք հարցեր։

Ներկա ձեռագրերում մեզ հետաքրքրում է Մոնղոլների կողմից Անիի գրավման տարեթիվը՝, որովհետև մեր նպատակն է ներկա գտնված անանուն ժամանակագրության հաղորդած տեղեկության հիման վրա ցույց տալ որ մինչև օրս սխալ է մեկնաբանվել, ավելի շուտ հասկացվել, Ս. Օրբելյանի, Կ. Գանձակեցու, Վարդան մեծի, ինչպես և ուրիշների տված տեղեկությունները Անիի գրավման մասին։

Պետական Մատենադարանի 8100 համար ձեռագրի 245ա էջում ասված է ՈՁԵ (685+551=1236) թվին անառիկ բերդն, որ կոչի Կայեան, և Լոռի քաղաքն և յԱնի մայրաքաղաքն հայոց, զաւառք և անառ բերդօքեայք և քարայք անմուտ Մայրիք ի միում ամ առան [1]) (ընդգծումն իմն է Վ.Հ.), և կոտորեցան անհամար և անթիվ արք և կանայք և մանկունք. և ով կարէ պատմել զնեղութիւնս և զտառապանս զոր էհաս մեզ յանողորմ ազգէն նեռողաց՝ որպես ասաց սուրբ Հայրապետն Ներսես՝ տեսեալ հոգւոյ ակամբ ի ժամանակին իւր և ասէ. քակեսցին հայք ի հիմանց յազգեն նեռողաց, դատարկասցին հանապարհք բազմաղնաց առ ի զգոյշ մարդկանց։ Եթե

[1]) Բնագրում տված է արան։

ուշադրությամբ դիտելու լինենք ժամանակագրության այն տողերն ուր ասված է «ՈՁԵ թվին , անաուիկ բերդն, որ կոչի Կայեան, և Լոռէ քաղաքն, և յԱնի մայրաքաղաքն հայոց... ի միում ամ առան» ապա մեզ համար միանգամայն պարզ կդառնա, որ այդ բոլոր վայրերի գրավումը եղել է մեկ տարվա ընթացքում միաժամանակ և այդ տարին ՈՁԵ թվին այսինքն՝ 685+551, որը հավասար կլինի 1236-ի։

Այսպիսի որոշակի ցուցում Անիի գրավման թվի մասին չունեն ոչ Կ. Գանձակեցին ու Ս. Օրբելյանը և ոչ էլ Վարդան մեծն ու Ս. Անեցին։

Վերոհիշյալ պատմիչների մոտ մենք հանդիպում ենք այդ վայրերի գրավումների նկարագրությանը գրեթե նույն հաջորդականությամբ։ Նրանք բոլորով էլ տեղյակ են Լոռու, Կայենի և Անիի գրավումներին և նրանցից ոչ մեկը այդ վայրերը չի շփոթում մի ուրիշ վայրի հետ, նրանք են այնպես, ինչպես որ տալիս է այդ Անանուն ժամանակագիրը։ Միաժամանակ նրանց բոլորի վկայություններից երևում է, որ այդ վայրերի գրավումները եղել է մեկ տարում, որ «փոթորկվող մրրիկի նման» Հայաստանի վրա արշավող մոնղոլական հրոսակախմբերի լուրջ դիմադրություն կազմակերպելու համար Հայաստանը ոչ մի ռեալ ուժ չուներ և նրա քաղաքների ու բերդերի բնակչության կողմից կազմակերպված ամեն մի դիմադրության փորձ անմիջապես ջարդվում էին իրար հետևից դրոհող Մոնղոլական հեծյալ բանակների կողմից։

Պատմիչների վկայություններից, ի տարբերություն ներկա անանուն հեղինակից, միայն մի բան է պակասում, դա ՈՁԵ-ն է ,որը չի նշած որպես Անիի գրավման տարեթիվ։

Մեզ թվում է, կոմենտարիաները ավելորդ են, եզրակացությունը ներկա անանուն ժամանակագրությունից հետո պարզ է։ Անին Մոնղոլների կողմից գրավվել է 1236 թվին։